

ԱԳՐՈՐԸ

Լրատու

ՀՈՒՆԻՍ 5 - 16 2015 թ. ԹԻՎ 17 (2072)

ՏԱՍԵՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Ե 1951 թ. ԳԻՆԸ՝ 120 ԳՐԱՍ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



Նախարարը կարևորել է JICA-ի կողմից կազմակերպվող դասընթացները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ՀՀ-ում ճապոնիայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Էյջի Տագուչին:

Շնորհավորելով դեսպանին Հայաստանում դիվանագիտական առաքելություն սկսելու կապակցությամբ՝ Սերգո Կարապետյանը հույս է հայտնել, որ Հայաստանում ճապոնիայի դեսպանատան բացումը կնպաստի երկու երկրների համագործակցության ընդլայնմանը, այդ թվում՝ նաև գյուղատնտեսության ոլորտում:

«Ճապոնիայի կառավարությունը մեծապես աջակցել է Հայաստանին անկախացումից հետո, հատկապես՝ գյուղատնտեսության բնագավառի զարգացման ուղղությամբ, և համոզված եմ, որ Ձեր նշանակմամբ մեր երկու երկրների միջև հարաբերություններն ավելի կամրապնդվեն ու կզարգանան», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Բարձր գնահատելով հատկապես ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից Հայաստանում իրականացվող աշխատանքները, որոնց շրջանակում տրամադրվել է անհատույց դրամաշնորհ՝ տեխնիկական միջոցների, սարքավորումների և ծառայությունների ձեռքբերման համար: Նախարարն ընդգծել է, որ այդ գործակալությունն իր գործունեությամբ մեծապես նպաստում է մեր երկրում ագրարային ոլորտի առաջընթացին: Բացի այդ, նախարարը կարևորել է նաև JICA-ի կողմից կազմակերպվող տարբեր մասնագիտությունների գծով դասընթացները, որոնց մասնակցել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի և համակարգի մի շարք մասնագետներ:

Դեսպան Էյջի Տագուչին, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, համոզմունք է հայտնել, որ գյուղատնտեսության ոլորտում Հայաստանի ու ճապոնիայի միջև առկա է մեծ ներուժ, և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել այն լավագույնս օգտագործելու համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև JICA-ի կողմից կատարվող ուսումնասիրություններն ու նախապատրաստական աշխատանքները՝ Եղվարդի ոռոգման համակարգի բարելավման ծրագրի իրականացման ուղղությամբ, որի համար ճապոնիայի կառավարությունը տրամադրելու է վարկային միջոցներ: Ծրագրով նախատեսվում է Եղվարդի ջրամբարի վերականգնումը և այդ տարածաշրջանում ոռոգման համակարգերի արդիականացումը:

Վստահություն հայտնելով, որ Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքը, մասնավորապես՝ հայկական գինին, կոնյակը, թարմ պտուղ-բանջարեղենը, ձկնամթերքն ու չրերը կարող են մեծ հետաքրքրություն ներկայացնել ու պահանջարկ ունենալ ճապոնական շուկայում՝ նախարար Սերգո Կարապետյանն առաջարկել է ճապոնիայում կազմակերպել հայկական գյուղմթերքի ցուցահանդես: Ի պատասխան հնչեցված առաջարկի՝ դեսպան Էյջի Տագուչին պատրաստակամություն է հայտնել ուսումնասիրել առաջիկայում նման ցուցահանդեսի կազմակերպման հնարավորությունը:

Հանդիպման ավարտին՝ գրուցակիցները վերահաստատել են ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ հայ-ճապոնական երկկողմ հարաբերությունների խորացման ուղղությամբ:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի հրամանով, անտառների խոտածածկ տարածքներում հրդեհների կանխարգելման, ինչպես նաև անտառային հրդեհների առաջացման հնարավոր ռիսկերը մեղմելու նպատակով, հանձնարարվել է «Հայաստան» ՊՈԱԿ-ի բոլոր մասնաճյուղերին՝ թույլատրել հանրապետության բոլոր գյուղացիական տնտեսություններին անտառների խոտածածկ տարածքներում՝ առանց արգելքի, անվճար իրականացնել խոտհնձի աշխատանքներ:

Ընթացիկ տարում Հայաստանից, ընդհանուր առմամբ, արդեն արտահանվել է 43 400 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 26 847 տոննայի դիմաց: Հունիսի 14-ի դրությամբ, արտահանվել է 17 186 տոննա ծիրան՝ նախորդ ամբողջ տարվա 1791 տոննայի դիմաց:

Հայաստանից, այսօրվա դրությամբ, արտահանվել է 1589 տոննա կեռաս, նախորդ ամբողջ տարվա 370 տոննայի դիմաց: Հայկական թարմ պտուղ-բանջարեղենը հիմնականում արտահանվել է՝ Ռուսաստան, Ղազախստան, Բելառուս, Լեհաստան, Վրաստան, Արաբական Միացյալ Էմիրություններ, Շվեյցարիա, Չեխիա, Նորվեգիա, Զուլվեթ:

Հունիսի 18-ից ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ, Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի պուրակին հարող տարածքում կվերաբացվի գյուղատնտեսական մթերքների երկրորդ տոնավաճառը:

Տոնավաճառը կգործի յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին:

Այս տարի գյուղատնտեսական առաջին տոնավաճառը վերաբացվել է հունիսի 6-ին՝ Կասյան փողոցի վերին հատվածում: Բացման պահից մինչ օրս այնտեղ կազմակերպվել է 12 տոնավաճառ, որին մասնակցել են 1680 գյուղատնտեսներ: Օրական իրացվել է շուրջ 40-50 տոննա գյուղմթերք:

Տոնավաճառին մասնակցող ՀՀ տարբեր մարզերի գյուղացիական տնտեսությունները սպառողներին ներկայացնում են բացառապես սեփական արտադրանքը: Գյուղացիական տնտեսությունների մասնակցությունը տոնավաճառներին անվճար է: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տոնավաճառների մասնակիցներին անվճար տրամադրում է նաև հարմարավետ վրաններ, վաճառասեղաններ, կշեռքեր և սայլակներ:

Տոնավաճառն անցկացվում է 2011 թվականից, և գյուղատնտեսական մթերք արտադրողների համար տոնավաճառին մասնակցելու պայմաններն անփոփոխ են:

Սահմանվել և հետևողականորեն կիրառվում են տոնավաճառին մասնակցելու հատուկ ընթացակարգեր. մասնակցությունը տոնավաճառին թույլատրվում է միայն գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) կողմից տրված համապատասխան տեղեկանքների առկայության դեպքում, որոնք հավաստում են, որ վաճառքի ներկայացվող ապրանքը հանդիսանում է տվյալ մասնակցի սեփական արտադրանքը:

Սկսվել է ցորենի բերքահավաքը Էջ 2

Մասնագետի խորհուրդ Էջ 6

Նպատակը համախմբված աշխատանքն է Էջ 6

ՄԵՄԻՆԱՐ

Համայնքային դասընթացներ՝ «Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացում» թեմայով

Վորլդ Վիժն ՄԲԿ Թալինի S2Ծ-ում ընդգրկված համայնքներում կարողությունների հզորացման նպատակով, «Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացում» թեմայով ուսուցողական սեմինար դասընթացների կազմակերպման և իրականացման համար պատասխանատու կազմակերպություն էր ընտրվել Արագածոտնի ԳԱՄԿ-ը: ԳԱՄԿ-ն ունենալով խորհրդատվական նյութերի հարուստ բազա և նմանօրինակ ծրագրերի մշակման բազմամյա փորձ, համաձայնեցնելով Վորլդ Վիժն ՄԲԿ Թալինի S2Ծ-ի հետ, «Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացում» թեմայով դասընթացների համար տպագրել էր՝ «Գյուղատնտեսության արտադրության արդյունավետության բարձրացում», «Արդյունավետ հողագործության վարում» և «Արդյունավետ անասնապահության վարում» տեղեկատվական գրքույկները:

Ուսուցողական սեմինարները՝ Թալինի, Արտենի, Մաստարա, Ներքին Բազմաբերդ, Ցամաքասար, Ոսկեթաս, Կաթնաղբյուր, Դավթաշեն համայնքներում կազմակերպել էին՝ Արագածոտնի ԳԱՄԿ-ի Թալինի տարածաշրջանի խորհրդատուները: Հողագործության դասընթացների ընթացքում, ընտրված շահառուներին հողագործության առաջավոր տեխնոլոգիաներին ծանոթացնելու նպատակով, կազմակերպվել էր այցելություն Արագածավանում գործող «Ծիրանուտ» ՍՊԸ-ի օրգանիկ այգի, որտեղ մասնակիցները ծանոթացան ծիրանենու, դեղձենու, սալորենու մշակության օրգանիկ եղանակին, ոռոգման արդյունավետ տեխնոլոգիաներին:

Անասնապահության դասընթացների ընթացքում ընտրված շահառուների համար անասնապահության առաջավոր տեխնոլոգիաներին ծանոթացման՝ նպատակով՝ կազմակերպվեց այցելություն Աշտարակի տարածաշրջանի Դազարավան համայնքի թռչնաբուծական ֆերմա և ձկնաբուծական տնտեսություն, որտեղ մասնակիցները ծանոթացան թռչունների, ձկների խնամքի, կերակրման ու պահվածքի առաջավոր տեխնոլոգիաներին:

Սոս Հարոյան



ԿՐԹԱՎԱՆ

Ամենակարևոր ներդրումը կրթության հնարավորություն ստեղծելն է

Ընդունվելով ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիր (MAB), ես հայտնվեցի մի աշխարհում, որտեղ բոլոր հնարավորությունները ստեղծված են նոր սերնդի համար՝ խիզախելու և հաջողության հասնելու: Սա կրթական այնպիսի միջավայր է, որտեղ պատրաստում են առաջնորդներ և արհեստավարժներ, և որտեղ բոլորը հավատացած են, որ նորարարական կրթությունն է այն ամենակարևոր գործոնը, որի միջոցով հնարավոր է հասնել հասարակության ընդհանուր բարօրությանը:

MAB ծրագիրն ինձ համար ամբողջ կյանքի համար արված ներդրում է, քանզի արդիական, նորարարական և գործարար ուղղվածություն ունեցող ուսումնական պլանը և միջազգային որակավորում ունեցող դասախոսական կազմի ամենօրյա աջակցությունը եզակի են ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ տարածաշրջանում: Այս հաստատությունը մեզ կրթում և սովորեցնում է լինել ինքնուրույն մտածողներ և բիզնեսում արդյունավետ որոշումներ կայացնողներ: Այստեղ մենք գիտակցում ենք գիտելիքի իրական ուժը: Ընդ որում, խոսքը միայն լատինային կրթության մասին չէ, այլ նաև՝ ուսումնասիրողական պրակտիկաների և, որ շատ կարևորում են, գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտում գիտական հետազոտություններին մասնակցելու հնարավորության: Այս բոլորը մեզ հնարավորություն են տալիս բնականոն զարգացում ապրել որպես երիտասարդ արհեստավարժներ:

Ես երջանիկ եմ, որ մեկ տարի առաջ հայտնվեցի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի մագիստրոսական ծրագրի՝ ծանր, բայց ստեղծարար աշ-

խատանքով լի միջավայրում: Սակայն իմ այս մեծ ցանկությունը կարող էր չիրականանալ, եթե ես չստանայի Հովնանյան հիմնադրամի կրթաթոշակը: Ընդ որում, հաջողության այս դուռը բացվեց ոչ միայն իմ, այլև իմ մի քանի համակուրսեցիների առջև: Այս կրթաթոշակը ներդրում է ոչ միայն իմ և ըն-



կերներիս ապագա կարիերայում, այլև՝ առհասարակ մեր երկրի ապագայում: Ի՞նչը կարող է լինել ավելի արժեքավոր ներդրում, քան՝ կրթությունը:

Ես մտադիր եմ մագիստրոսական կրթությունս ավարտելուց հետո փորձել ստեղծել սեփական բիզնես: Վստահ եմ, որ Հայաստանի գլխավոր հարստությունը կրթված երիտասարդությունն է: Հրայր և Աննա Հովնանյան հիմնադրամը ամենակարևոր ներդրումն են անում այսօր՝ կրթության հնարավորություն ստեղծելով տեղական ու առաջնորդի տաղանդ ունեցող երիտասարդների համար, ովքեր վաղը կարևոր որոշումներ են ընդունելու երկրի տնտեսության ու հանրային կյանքի տարբեր բնագավառներում:

Գոհար Սահակյան

ՀԱԱՀ ԱՌԿ-ի մագիստրոսական ուսանող

ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ



Գյուղատնտեսական նոր տեխնոլոգիաները Արգել համայնքի ֆերմերների համար այսուհետք հասանելի են



«Հյուսան Դիգնիթի Ընդ Փիս» Բարեգործական Հիմնադրամը (HDP), 2015թ.-ի մայիսի 20-ից, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) ֆինանսավորմամբ, ՀՀ Կոտայքի մարզի Արգել համայնքում իրականացնում է «Կենսամակարդակի բարելավման քայլեր Արգել համայնքում» 8 ամսյա ծրագիր:



Համայնքի ղեկավար Մաթևոս Ավագյանը վավերացնում է ծրագրի իրականացման համագործակցության համաձայնագիրը

ջոցով, ապահովել եկամտի կայուն աճ, որը կնպաստի 15 ընտանիքների (60 շահառուներ) բարեկեցությանն ու համայնքի զարգացմանը:

Բացի այդ, որպես գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության այլընտրանքային մեթոդ, HDP Հիմնադրամը նախաձեռնել է Արգել համայնքում շահա-

գործել կաթիլային ոռոգմամբ, ջերմախնայող, բարձր բերքատվություն ապահովող պոլիէթիլենային 100 քմ. թաղանթապատ ջերմոց, որից ստացված բերքը՝ լոլիկ, վարունգ, պղպեղ ամբողջությամբ պետք է հատկացվի համայնքի նախակրթարանին՝ որտեղ այժմ հաճախում են թվով 80 սաներ:



Մարզերի պատրաստման պրակտիկ դասընթացի իրականացում HDP փորձագետի կողմից:



Նոր կառուցված 100 մ² մակերեսով պոլիէթիլենային ջերմոցը Արգել համայնքի նախակրթարանի բակում

Այս ուղղությամբ, HDP –ն սերտորեն համագործակցել է տեղական իշխանությունների հետ, արդյունքում՝ համայնքապետարանը համաձայնել է համաֆինանսավորել նախաձեռնությունը և ջերմոցի կառուցման համար՝ որպես համայնքի ներդրում, տրամադրել 1 մլն ՀՀ դրամ:

Հարկ է նշել, որ ծրագ-

րի շրջանակներում Արգելում առաջին անգամ իրականացվելու է նաև ոչ ավանդական գյուղատնտեսական մշակաբույսի՝ բրոկկոլիի մշակություն:

Իրականացվող ծրագրի կարգախոսն է՝ օժանդակել համայնքին, իրենց միջոցներով հոգալ իրենց խնդիրները, կիրառել նոր տեխնոլոգիաներ և արդյունավետ օգտագործել տեղի ռեսուրսները:

Համոզված ենք, որ ծրագիրը կխթանի համայնքում բնակվող այլ ֆերմերների՝ հստակ հաջողված տեխնոլոգիաներն ընդօրինակելու և իրենց սնամեղքներում կիրառելու գործին:

Սարգիս Մանուկյան
Ծրագրի ղեկավար

ԱՆՍՏՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԽՈՇՈՐԸ ' ԱԶԱՏ ՊԱՀՎԱԾՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մեր հանրապետությունում խոշոր եղջերավորի բաց պահվածքը (որը նաև -40+40 պահվածք են անվանում) արդեն գրեթե մեկ տասնամյակ է, ինչ առանձին վայրերում կիրառվում է: Մակայն, հավանաբար, փարբեր կազմակերպությունների կողմից կարարված փորձարկումներն այդպես էլ, որքան մեզ հայրենի է, չեն ամփոփվել, մարչելի չեն դարձել մասնագետների լայն շրջանակներում: Ենթադրվում է, որ, ընդհանուր առմամբ, հանրապետության մասնագետների կողմից դրական գնահատվելով՝ այնուամենայնիվ այն փարածում չգրավ, թերևս այն պարճատով, որ փեխնորգիան նախարարված է գլխավորապես մասսայի ցեղերի համար:

Այնուամենայնիվ, նշված շատ կարևոր առավելություններ ունեցող տեխնոլոգիայի հետագա զարգացումն ու տարածումը, թերևս, վերը նշված առումով, կնպաստի բնագավառի զարգացմանը, իսկ մեր մամուլում պարբերաբար տպագրվող նյութերն ու մտքերի փոխանակումը ժամանակին կվերացնեն դրա հնարավոր խոչընդոտները:

Որպես օրինակ՝ դիտարկենք ոչ թե մսային անասնապահության համաշխարհային առաջատարների՝ Ավստրալիայի և Միացյալ Թագավորության փորձը, այլ՝ սկսնակ Ղազախստանի, նաև նրա համար, որ վերջինիս բնապայմանները բավական մոտ են մեր լեռնային շրջաններին, որտեղ էլ՝ նպատակահարմար գտնելով բաց պահվածքը, իրականացվել են վերջին տարիների համապատասխան ծրագրերը:

Ղազախստանում 2011 թ.-ի ավարտին, ծրագրերը մեկնարկեց՝ 373 գլուխ անգուս ցեղի խոշոր եղջերավորի ներկրմամբ, որը մսային անասնաբուծության առաջատարն է: Ծրագրի նպատակներն էին՝ հնարավորինս նվազեցնել մսի ինքնարժեքը և, անասնազխաբանակի աճի հետ (այժմ այն հասել է 3500-ի, որից՝ 2300-ը մայրական կազմն է), դիվեր-

սիֆիկացնել տնտեսություններն, ըստ նեղ մասնագիտական կողմնորոշման, այն է վերարտադրություն, բուսում, արտադրողների բուծում, ինտենսիվ կերակրման տեխնոլոգիաների մշակում և կիրառում: Միևնույն ժամանակ կենդանիների բնագրը ամբողջ ծրագրի ընթացքում համարվել է որոշիչ՝ բոլոր տեսակի որոշումների ընդունման ընթացքում:

Ազատ արածեցման ընթացքը տևել է կես տարուց ավելի՝ մայիսից մինչև նոյեմբեր, էլեկտրական հովիվներով կահավորված 6000 հա տարածքում, որի ընդհանուր պարագիծը կազմել է 300 կմ, իսկ նոսրացված տեղերը վերականգնվել են բազմամյա խոտերի պարբերական ցանքով: Նոյեմբերից մինչև ապրիլ կենդանիները պահվել և կերակրվել են նույնպես բաց տարածքներում, սակայն անբարենպաստ պայմաններում, որոնք են՝ -10 °C-ից բարձր ջերմաստիճանը և 18-20 մ/վ արագությամբ քամին, օգտագործվել է կամ բնական ռելիեֆը, կամ՝ հատուկ քամապաշտպան պարիսպներն ու անասնակերի հակերը:

Շատ արժեքավոր կարելի է համարել Կանադայից ընդօրինակված փորձը (swath-bale grazing), երբ հացահատիկայինների (գարի, վարսակ) ծղոտը կամ բազմամյա խոտը լասերով թողնվում է դաշտում, որտեղ կենդանին՝ էլեկտրապարիսպներով ուղղորդված, դրանք հեշտությամբ գտնում է:

Մնում է ջրի հարցը, որի լուծումը նույնպես եկել է Կանադայից. փորվում է հորատանցք, տեղադրվում են խմոցներ, որոնք լցվում են արևային էներգիայով աշխատող պոմպերի միջոցով, որոնք էլ, իրենց հերթին, գործի են դրվում խմոցների շուրջ շարժ գրան-

ցող տվիչներով: Վերջիններս նաև կարգավորում են ջրի մակարդակը: Փոթորիկների պարագայում համակարգը գործում է արևային էներգիայով նախօ-



րոք լիցքավորված մարտկոցներով կամ դիզել-գեներատորի միջոցով:

Խոշոր եղջերավորի աճեցման տեխնոլոգիան, որի առաջին փուլն է՝ 13-15 ամսական ցլիկներով բեղմնավորումը, այնպես է տարվում, որ երկրորդ փուլը՝ ծինը, տեղի ունենա (ի դեպ՝ մարդու նվազագույն մասնակցությամբ) մայիս-հունիսին: Եվ արդեն փթթող արոտավայրերում մատուցվող մայրական կաթի հետ ստանում է նաև լիարժեք սնունդ: Դրանք թեպետ իրենց քաշով փոքր-ինչ զիջում են ստացիոնար պայմաններում ծնված ցեղակիցներին, բայց փոխարենը՝ ծինը շատ թեթև է անցնում, որը ծրագիրն իրականացնողները՝ միս/ճարպ իդեալական հարաբերության հետ միասին, իրենց գլխավոր նվաճումն են համարում:

Վ <

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՎՈՒՄ Է ԱՆԱՐԱՏ ՄՆԵԴԱՄԹԵՐՔԸ

Գեղարքունիքի մարզի Թթուջուր համայնքի գեղատեսիլ բնությունը, սառնորակ աղբյուրներն ու մաքուր օդը հաճելիորեն զարմացնում են գյուղ ժամանած զբոսաշրջիկներին: Բացի այդ, բուժական նշանակություն ունեցող «Թթուջուր» կոչվող աղբյուրները նույնպես գրավիչ պայմաններ են ստեղծում հանգիստն այստեղ անցկացնող զբոսաշրջիկների համար:

Արդեն մի քանի տարի է, ինչ գյուղում գործում է մեկ հյուրատուն, իսկ առաջիկայում դրանց թիվը կավելանա ևս երեքով: Վերջիններս, ՓՄՁ-ի տրամադրած դրամաշնորհներով, համապատասխանեցվում են միջազգային չափանիշներին: «Արվում է հնարավորը, որպեսզի գրավիչ պայմաններ ստեղծվեն Եվրոպայից և աշխարհի այլ երկրներից ժամանող զբոսաշրջիկների համար: Գյուղական զբոսաշրջիկին այսօր ավելի շատ հետաքրքրում է մեր ապրելակերպը, պայմանները, կենցաղը: Զբոսաշրջիկներն առավել կարևորում են մաքուր սննդամթերքի առկայությունը, ինչը և արտադրվում է Թթուջուրում»,- ասում է գյուղապետ Վիգեն Սահակյանը: Ի դեպ, զբոսաշրջության այդ փոքրիկ ժամանակահատվածը նրանք անց են կացնում գյուղական կոլորիտով հարուստ միջավայրում: Առավոտ վաղ արթնանում են գյուղաբնակների հետ, մասնակցում կթի աշխատանքներին, այնուհետև՝ կաթի վերամշակման գործընթացին: Ավանատես են լինում, թե ինչպես է անարատ կաթը, տնային պայմաններում,



վերածվում կաթնամթերքի: Եվ, ի վերջո, զբոսաշրջիկները ճաշակում են պատրաստված կաթնամթերքը: Գյուղապետի տեղեկացմամբ, առաջիկայում կգործեն նաև լճակային տնտեսություններ, որտեղ բուծվելու են տարբեր ձկնատեսակներ: Առաջում ընթանում են ձկնատեսակների ընտրության փորձնական աշխատանքները: Զբոսաշրջիկների համար պայմաններ են ստեղծվում տեղում ձկնեղենից տարբեր կերակրատեսակներ պատրաստելու համար: Գյուղամիջյան գետակները նույնպես հարուստ են ձկնատեսակներով, հետևաբար զբոսաշրջիկները կարող են զբաղվել

նաև սիրողական ձկնորսությամբ: Զիարշավների կազմակերպման նպատակով, գյուղում խնամում են 30 ձի, որոնց հետ առաջմ վարժեցման աշխատանքներ են տարվում: «Ձանքեր չենք խնայում, որպեսզի զբոսաշրջիկների ժամանակը հագեցած լինի հետաքրքիր միջոցառումներով: Գյուղական տուրիզմի բարձր մակարդակով կազմակերպման համար գյուղում օրերս, ՓՄՁ-ի կողմից անցկացվեցին ուսուցողական դասընթացներ: Ինչպես միշտ, յուրաքանչյուր նոր իրականացվող ծրագիր դժվարություններով է առաջ ընթանում, սակայն, ի վերջո, ագրոտուրիզմը մեր գյուղում կզարգանա և արդյունք կապահովվի: Իսկ դրա համար առկա են բոլոր նախադրյալները»,- եզրահանգում է գյուղապետը: Գյուղում զարգացման միտում ունի նաև մեղվաբուծությունը, արտադրվում է ալպյան գոտու բազմաձաղկային մեղր, որն, ըստ գյուղապետի, իրացվում է առանց դժվարությունների, քանի որ տնտեսություններն ունեն իրենց մշտական գնորդները: Մեղվաբուծությունը նույնպես ագրոտուրիզմի հետաքրքրությունն ենրկայացնող ուղղություններից մեկն է: Իսկ ինչ վերաբերում է «Թթուջուրին» ապա այն կարող է նաև բուժամիջոց հանդիսանալ մաշկային հիվանդություններ ունեցող զբոսաշրջիկների համար, ինչը կլինի ամենամեծ անակնկալը:

Նելլի Սահակյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՑՈՒՑԱՆԻՇ

Արագածուրի մարզի Սասունիկ գյուղը հիմնադրվել է 1960 թ.: Գյուղից 3 կմ հարավ-արևելք պահպանվել է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի «Սասունիկի դաշտ» ամրոցը: Առաջին բնակիչները եղել են սասունցիներ՝ եկել են Վերին Սասունից: Շուրջ 4000 բնակչություն ունեցող համայնքում հիմնականում զբաղվում են խաղողագործությամբ, ծիրանի ու հացահատիկային մշակաբույսերի մշակմամբ: 2008 թ., համայնքի ղեկավար ընտրված Արման Մարգարյանի հետևողական աշխատանքի արդյունքում համայնքում լայնածավալ աշխատանքներ են կատարվել: Այս և այլ հարցերի շուրջ զրուցել են համայնքի ղեկավարի հետ:



«Պարոն Մարգարյան, այս տարի բերքատվության ինչպիսի ցուցանիշներ կգրանցվեն:

-Նշեմ, որ նախորդ տարի, ցավոք սրտի, ցրտահարության պատճառով բերքի շատ մեծ կորուստ ունեցանք, որը սակայն պետության կողմից սուբսիդավորվեց. գիջվեց հողի հարկի և ջրի գումարի մի մասը: Այս տարի չափից ավելի մեծ քանակությամբ բերք ունենք: Սկսվել է ծիրանի բերքահավաքը, այս տարի նաև՝ արտահանումն է մեծաքանակ: Ներկա պահին ՌԴ-ից, Վրաստանից ժամանած մեքենաները տեղափոխում են 150-200 դրամով գնված ծիրանը: Մեզ մոտ առաջին անգամ է, որ մարդիկ կարողանում են նմանատիպ ձևով վաճառել իրենց բերքը: Նախկին տարիներին խնդրում էին որևէ գործարանի, որ 30 դրամով ընդունի բերքը: Սպասվում է խաղողի մեծ բերք: Արդեն հավաքել ենք հացահատիկը, միջինը՝ 35-40 ց/հա, ոչ մի տարի այսպիսի բերք չենք ունեցել: Այս տարվա գարնանացանից հավաքվել է 27 ց/հա բերք, ունենք 17 հա առվույտ: Կորնզանի սպասելիքները չարդարացվեց, քանի, որ բնակլիմայական պայմաններն անբարենպաստ էին գարնանացանի համար: Մեզ մոտ հիմնականում կատարում ենք աշնանացան, քանի որ գարնանացան սերմից ցածր բերքատվություն է ստացվում:

Ներկա պահին գյուղատնտեսությունը գտնվում է կայուն վիճակում: Մեր համայնքում գտնվող «ԱՐՄԵՆԻԱ ՎԱՅՆ» գործարանը բերքի ընդունման համար փրկություն է, ինչպես նաև համայնքից 120-130 աշխատողներ կան արտադրության ու շինարարության ոլորտում:

- Համայնքում ոռոգման և խմելու ջրի մատակարարման աշխատանքներն ինչ վիճակում են:

Գյուղը ստանում է բնական ջրամատակարարում, անգամ գյուղի ամենավերջին կետում: Ունեինք ջրագծերի լուրջ խնդիր և կորուստներն էին շատ, և

օգտվում էինք խմելու վատ ջրից: Նախորդ տարի Ասիական բանկի միջոցներով 10 կմ 300 մ երկարությամբ նոր ջրագծեր են կառուցվել, որոնք արդեն հանձնված են շահագործման:

Խմելու ջրի խնդիրը ևս լուծվել է, իսկ ոռոգման ջրի խնդիր ունենք, հին է ներքին ցանցը և ամեն տարի վերանորոգման աշխատանքներ են իրականացվում ջրօգտագործողներին ջուր հասցնելու համար:

Այս պահին համայնքի ոչ գազաֆիկացված փողոցներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «ԳԾԻԳ» ՊՀ կողմից իրականացվում են գազաֆիկացման աշխատանքներ՝ շուրջ 11.5 կմ երկարությամբ:

- Ինչպե՞ս է կազմակերպվում երեխաների, պատանիների առօրյան:

-Համայնքում գործում են երկու դպրոցներ՝ «Կարինի» և «Գևորգ Զառչի» անվան միջնակարգ դպրոցները: Այս տարի մայիսի 25-ին ունեցանք նորակառուց մանկապարտեզ՝ ֆինանսավորված Մեծ Բրիտանիայի և «Հայաստան համահայկական հիմնադրամի» միջոցներով, ինչպես նաև մեր համայնքի ներդրումներով:

Ներկա պահին բարեկարգման աշխատանքներ են ընթանում: Դպրոցի տարածքում ունենք ֆուտբոլի մարզահրապարակ, որից բոլորն էլ օգտվում են: Ունենք մշակույթի տուն, պարի խումբ՝ «Սասունիկ», որոնք ներկա պահին մասնակցում են Ծաղկաձորում անցկացվող փառատոնին: Մշակույթի տունը գերազանց վիճակում է գտնվում: Հանրապետության նախագահի հրատապ ծրագրերի շրջանակներում, մարզպետարանի կողմից վերանորոգվել է այն, ունենք դահլիճ, գործում են շախմատի, կար ու ձևի, պարի խմբեր:

- Ի՞նչ ծրագրեր եք նախատեսել իրականացնել առաջիկայում:

-Դիմել ենք մի քանի հասարակական, բարեգործական կազմակերպությունների, որպեսզի բարեկարգեն գյուղի կենտրոնում գտնվող այգին ցանկանում ենք կանաչապատել, կառուցել խաղահրապարակներ, հավանաբար հաջորդ հանդիպմանը կտեսնեք, գործընթացը ընթացքի մեջ է:

Մեր համագյուղացիները, վերաբնակեցված տարբեր տեղերից, շատ հաշտ և համերաշխ են, խնամիրներ և բարեկամներ են: Կուզենայի, որ ավելի շատ նվիրվեն իրենց հողին ու իրենց գյուղին: Ժողո-



վորըը մեզանից ոչ հաց է ուզում, ոչ ջուր, պահանջում է միայն վերաբերմունք, որը ստանում են ամեն օր:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՆԱՍՆԱԲՈՒՄՈՒԹՅՈՒՆ


ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ

Արոտավայրերի բուսական համակարգերն, անշուշտ, տարիների ընթացքում հարմարվել են տեղանքին ու եղանակային պայմաններին, բայց կլիմայի անցանկալի փոփոխությունները, օրինակ, երկարատև ցրտերն առանց բավարար ձնածածկի, կարող են լուրջ վնաս հասցնել բուսականությանը, ինչը պետք է հաշվի առնել և լրացանքներն այսուհետև կանոնավոր դարձնել:

Ձմեռման լավ հնարավորություններ ունեն՝ անգամ տևական ցուրտ ձմեռվա պայմաններում, մարգագետնային սիզախտը, մարգագետնային շյուղախտը և մարգագետնային դաշտավուրը: Իսկ ծածկույթի դիմացկունությանը էապես վնասում են ուշ աշնանային արածեցումն ու հարը, տաք

խոնավ եղանակը, միակողմանի պարարտացումը՝ հատկապես անօրգանական ազոտական պարարտանյութերով: Վերջին պարարտացումը պետք է կատարվի օգոստոսի կեսերին: Մինչդեռ գոմաղբը՝ ցամքարով կամ առանձին, կարելի է տալ թե՛ հոկտեմբերի վերջին՝ արածեցումն ավարտելուց հետո, թե՛ ձմեռվա ընթացքում, սակայն ոչ ավելի, քան հեկտարին 10-15 մ³, քանի որ թե՛ կորուստները մեծ կլինեն, թե՛ միջավայրը՝ հատկապես ստորգետնյա ջրերը կաղտոտվի: Եթե գոմաղբի հեղուկ ֆրակցիան մեզի հետ միասին առանձնացվել է, այդ միացյալ հեղուկ ֆրակցիան, որպես պարարտանյութ օգտագործելուց առաջ, լազուններում պետք է պահվի ոչ պակաս՝ քան 6 ամիս:

Աշնանը արոտավայրերի համար ամենանպաստավորը ցուրտ արևային եղանակն է, երբ բույսերը հնարավորություն ունեն ձմեռումը նպաստավոր դարձնելու համար շաքարներ սինթեզ-



գել: Սակայն պետք է միաժամանակ հիշել, որ խոտածածկի ավելի քան 10 սմ ձյան տակ թողնելը նույնպես ցանկալի չի, որովհետև այն ձնհալից հետո գարունը կդիմավորի արդեն ֆուգա-

րիոզով վարակված, ինչը բացի նրանից, որ նվազեցնում է կերի որակը և ուտելիությունը, նաև բերքատվության զգալի անկման պատճառ է դառնում:

